

7376

≥ 2.7:

Нрнгнштеп ≥ 3. №. 4-17  
Саг-хинчип дж-4.

2.6.6

1307

329.14  
Z-24

16020

ՄԱՐՄԱՐԵՐՈՒ ՀԱՄԱՐ

329.14  
2-24

# Ա Բ Ա Ղ Ա Ի Մ Ն Ե Ր

Հ. Յ. ԴԱՅԱԿՅԱՂԵՑԻՆ

ՀՈՐԻՇԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈՂՈՎԻ

(Քաղաքածեն)

Ժ. հ. - 1907

ուաղինւողների մի գումարտակ, բաժանւած կուի յատակագծով, տակարդով, նոյնիսկ ծրագրով...

Ու հակառակ այդ չարագուշակ, ճնշող պարագաների, կազմակերպութիւնը դարձեալ մի անգամ ցոյց տևեց, որ «բախտաւոր աստղի տակ է ծնւել», գիտէ անարատ պահել 17-ամեայ Դրօշակը, և գաղափարի ոյժով յաղթահարել այն բոլոր կրքերը, որոնք չեն ստեղծագործում, այլ միայն աւերում են ու պառակտում...

Ժողովի պարապմունքների արդիւնքն և հիմնական որոշումները՝ դրա խրախուսի ապացոյցներն են:

1. Անջատման ծրագիրը, որ մի քանի ժամանակից ի վեր դարձել էր խլրութեան և նոյնիսկ կոփեների պատճառ, կուսակցաժողովը յետ մղեց մի ոգեսրիչ ժեստով, համարեա միաձայն: Նա որոշեց իր անցեալին և ոյժին վայել վճռականութեամբ երկու դատերն էլ՝ Թիւրքահայ և Կովկասիան՝ առաջ մղել Դաշնակցութեան դրոշակի տակ շաղկապւած և միացած:

2. Կովկասիան գործունէութեան նախադիը, որ 1905-ի Խորհուրդից ի վեր, համդիսանում է իբրև մի քաղաքական կուածաղիկ կազմակերպութեան շարքերում և այդ չարքերից դուրս, և իր պարունակած սկզբունքներով մեր շարքերը ոգեսրելու փոխարէն, մի անըմբունելի թիւրքացութեամբ ամենատխուր ընդհարումների և պառակտութերի պատրւակ եղաւ—ընդունեց վաւերացւեց, թէ ըստ իրաւասութեան և թէ ըստ էութեան, և դարձաւ այն հիմնաքարերից մէկը, որի վրայ պէտք է յենի Դաշնակցութեան սօցիալիստական գործունէութիւնը Անդրկովկասիան հայ ժողովրդի մէջ: Այդ հարցի լուծումը, որ պահանջեց ոյժերի լարումն, երկար ժամանակ, մեծ աշխատանք և մտքերի լայն փոխանակութիւն—ներկայ ժողովի ամենադրական արդիւնքներից մէկն է, արժանի յատուկ յիշատակութեան:

3. Սօցիալիստական ծրագրի հիմնական սկզբունքների վաւերացումը, իբրև տրամաբանական շարունակութիւն նախորդ որոշման պիտի համարւի Զորորրդ Ընդհանուր ժողովի մտածողութեան և աշխատանքների պսակը: Հիմնած իր ընդհանուր ծրագրի վրայ, և ուշադիր քաղաքական-տնտեսական կեանքի պահանջներին, որոնք հրապարակ են եկել վերջին 15 տարւայ ընթացքում, կազմակերպութեան զեկավար մարմինը վճուց՝ յայտարարել Դաշնակցութիւնը իբրև հայ աշխատաւոր դասակարգի կուսակցութիւն,

## ԶՈՐՐՈՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐԻ ԺՈՂՈՎԸ

(1907)

Մոայլ, յուետես մտքեր ներճնչող պարագաների տակ գումարւեց Դաշնակցութեան կուսակցաժողովը:—Հազիւ անցած արիւնոտ կուի ճամբան, ուազմադաշտից նոր դարձած զօրագնդի հոգսերը ճակատին, յաղթական՝ բայց արտում—յաղթւողը իր անգիտակից հարեանն էր—կանգնած անորոշ ապագայի հանդէպ, կուսակցութեան գերագոյն ժողովը զգում էր իրեն նոր և խոշոր պատասխանաւութեան առջև, բարդ և վտանգաւոր կոփեների հանդէպ:—կոււ արտաքին թշնամիների դէմ, որոնց յաղթահարելը իր տեսչն էր ու նպատակը, կուի ներքին պառակտող տարրերի դէմ, որոնց սանձելը իր վիշտն էր և ոյժերի վատնումը...

Այդ մի կողմից: Իսկ միւս կողմից՝ մի տարտամ Դումա, «թերխաշ» ծնունդը յեղափոխական հսկայական երկունքի, քառսքացիական ներքին ընդհարումներ, թշնամութիւն երէկեան ու դատակից բանակների միջև, բռնապետութեան նոր զրոհ, անորոշութիւն վաղւան համար իսկ սահմանի միւս կողմը՝ սովալլուկ հատւածներ արիւնաքամ ժողովրդի, դատարկւող գիւղեր, յեղափոխական մարտիկների հալածանք և բանտարկութիւն, և կենդրուում նոյն Ոճքագործը, զեռ կենդանի, զեռ յացող մեծագոյն աղէտների, որոնց սոսկաբեր դառնութիւնը ճաշակեցինք, բայց վախճանը չը տեսանք:

Ընդհանուր ժողովի բացումն ու կազմն իսկ կրում էր աղէտաւոր վիճակի գրօշմը—շատ ընկերներ, որոնք անցեալ Ընդհանուր ժողովից ճամբայ ելան, յեղափոխականի ցուպը՝ ձեռքին, նիւթելու սիրած ժողովրդին և սիրած գաղափարին, այլևս յետ, չեկան: Զոհւած են նրանք... Միւսները թէն կենդանի, բայց կապաւած իրենց վայրին ու գործին, անկարող էին յեղափոխական ժամադրափայրին գալու: Տիրաշունչ լուրերն ու նամակները, որը օրին նոր բօթեց էին բերում և շտապեցնում գործող-ընկերների դարձն ու մեկնումը, ժողովի փակումն և վերջաբանը: Մարտական հաշւէտուների ժողով չէր այն, այլ մօտալուտ կուի համար սպա-



որ ձգտում է քաղաքականապէս և տնտեսապէս կազմակերպել նրան, պաշտպանել նրա տնտեսական-դասակարգային և քաղաքական-ազգային իրաւունքները, նպատակ ունենալով՝ միւս աշխատաւորների հետ միասին, ձեռք գցել կառավարութեան ղեկը և այժմեան միապետական ու կապիտալիստական կարգերը փոխարինել լայն ռածկավարութեամբ և համայնական կարգերով՝ ժողովը ընդունեց և վաւերացրեց սօցիալիստական ծրագիրը, և յեղափոխական տակտիքը։ Ահա այդ ծրագիրը, հիմնաւորւած Ընդհանուր ժողովի մէջ, պիտի լոյս տեսնի մօտակայում և պիտի հանդիսանայ իրեւ ուղեցոյ մեր գործունէութեան, պրոպագանդի և ձեռնարկների, իրեւ յենարան կուսակցութեան աշխատանքների և մտածողութեան։ — Իր այդ կարենոր որոշման վերջնական ամբողջացումն տալու համար, ժողովը միաձայն որոշեց՝ յարեւ Միջազգային սօցիալիստական բանակին և յարարերութեան մէջ մտնելով Բիւբուկի Սօցիալիստական Բիւրոյի հետ ապահովել Դաշնակցութեան մասնակցութիւնը թէ այդ Բիւրոյի և թէ Միջազգային սօցիալիստական կօնդրէների մէջ։

4. Տակտիքը, որով պիտի ձգտենը մեր նպատակների իրագործման, գերազանցապէս յեղափոխական է։ Այդ կողմից Դաշնակցութիւնը, թէ Ռուսաստանի բազմաթիւ և թէ Թիւրքիայի փոքրաթիւ կազմակերպութիւնների շարքում գրաւում է բացառիկ դիրք։ Զը խորշելով այն բէֆօրմներից, որոնց ընթացիկ իրագործումը հասարակական-կուլտուրական այլ և այլ ասպարէզներում պահանջում է աշխատաւոր մասսաների անյետաձգելի շահերի տեսակիտից, կուսակցութիւնը ինչպէս անցեալում, նոյնպէս և ապագայում մնալու է յեղափոխական, այս բառի ամենախիստ իմաստով։ Յեղափոխական տակտիքի արտայայտութիւնները — ընդհանուր ապստամբութիւն, զինւած դիմադրութիւն կառավարութեան ոյժերին, քաղաքական լայն տերրօր, ցուցական-յեղափոխական ձեռնարկներ, ժողովրդական զինւած ինքնապաշտպանութիւն, քաղաքական և տնտեսական գործադունքներ, գիւղացիական և բանուրական շարժումներ — այդ բոլորը մանրամասն մշակւած և շաղկապւած պիտի կազմեն գործելակերպի այն ամբողջական սիստեմը, որով կուսակցութիւնը պիտի իրականացնէ իր ծրագիրը կեանը մէջ։

5. Համերաշխութեան սկզբունքը, լայնացրած և համերաշխ ձեռնարկների գերածւած, կազմելու է Դաշնակցութեան գործելակեր-

պի էական և առանձնապէս շեշտւած կողմը։ Այն, ինչ ցայժմ տեսնչանք էր, հիմա պիտի մարմնանայ և գառնայ իրականութիւն։ Եւ կազմակերպութեան Ընդհանուր ժողովը յատկապէս շեշտեց այդ ուղղութեան քաղաքական խոշոր կարեւորութիւնը կովկասում և մասաւանդ Թիւրքիայում, ուր զրկից ազգերի և համայնքների փոխարձ անտարերութիւնը կազմում է տիրող բէժիմի աջողութեան գերազանց հիմնաքարը։ Համերաշխութիւն հակառավարական ցոյցերի ժամանակ, շաղկապւամն ըմբոստացող ոյժերի՝ առանց կրօնի և ազգի խարութեան, միացած, միջազգային հողի վրայ դրած պահանջներ, գործադունքներ բոլոր ազգերին պատկանող բանուրների գիւղացիական միութիւններ տարբեր կրօնների պատկանող համայնքների մէջն և ուրիշ շատ ձեռնարկներ—ահա համերաշխ գործակցութեան արտահայտութիւնները, որոնց համար կուռակցութիւնը չի խնայելու. ոչ կենդանի ոյժեր, ոչ դրամ և ոչ պրօպագանդ։ Հալածւածներ բոլոր ազգերի, միացէք—ահա նշանաբանը։ Սեպարատիստական ոչ մի ձգտութիւն, ոչ մի դաւ համերաշխութեան դէմ—ահա Ընդհանուր ժողովի անկեղծ և ընդգծած հայեցակէտը։

Բարդ ծրագիր, խոշոր աշխատանք, անսովոր եռանդ և զոհաբերութիւն պահանջող ձեռնարկներ, և այդ՝ այնպիսի երկիրների մէջ, որ բոնապետութեան անսովոր ամբարտաւանութիւնը և շահերի հակոտնեայ զասաւորումը աւելի քան դժւարացնում է կազմակերպութեան անցնելիք ուղին։ Ահա թէ ինչու անհրաժեշտ են գաղափարի և կազմակերպութեան նւիրւած մարտիկներ, հերոսների խմբեր, անձնւէր գրօշակակիրներ, որոնք՝ կարող լինեն մի կողմից սրտապնդել լքուող շարքերը, հաւատ ներշնչել թերահաւատ ամբոխին, և միւս կողմից անդադրում և անհատում ոյժով շարունակել սկսւած կոփւր, որ գուցէ նոյնքան երկար ապագայ ունի, որքան և երկար անցեալ։ Տատանւողների երկդիմի ոյժերի ասպարէզ չէ այդ։ Եւ ոչ էլ վայր՝ զրացւելու ներքին պառակտումներով, փոխադարձ վարկարեկման անօգուտ աշխատանքով, յեղափոխութեան անունը մրտող ներքին կոփւներով։

Զտւած շարքեր, համոզւած զինւորներ, զոհաբերութեան պատրաստ մարտիկներ՝ ներշնչւած նոյն ծրագրով, սրտապնդւած միենոյն տակտիքով—ահա կազմակերպութեան պահանջը։ Եւ ներշնչւած այդ գիտակցութեամբ, Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը

խսագոյն պատասխանառութեան կանչելով այն բոլորին, զինւոր թէ կազմակերպող, անհատ թէ մարմին, որոնք վարկարեկեցին կուսակցութիւնը իրենց գեղծումներով, բռնութեամբ և անարդ քայլերով, հրահանգում է բոլոր մարմիններին, աւելի քան երբ եցէ, խիստ լինել, վանել շարքերից այն բոլորին, որոնք իրենց «համոզմունքով ու հաւատով», իրենց բարոյական և յեղափոխական հակումներով չեն համապատասխանում այս դժւարին և բարդ գործի մեծ պահանջներին, որոնք փոխանակ բարձրացնելու հաւատը, պիտի թուլացնեն այդ և պիտի սպառեն կուսակցութեան բարոյական դրամագլուխը, առանց մի բան տալու։ Զտման, մաքրագործան, բարձրացան կրկնակի պահանջ է այդ, որի մասին բարձրաձայն յայտարարում է 1907-ի Ընդհանուր Ժողովը շեշտակի կերպով, առանց որևէ վերապահութեան...

Անգործ, պառակտող մարմինները պիտի կազմալուծեին. վարկարեկ ընկերները պիտի հեռանան. կազմակերպութեան անունը շահագործողները պէտք է խստագոյն պատժի ենթարկեին — այդ է Ընդհանուր Ժողովի կամքն ու որոշումը, նրա բացարձակ հրամանը։

Դաշնակցական ընկերներ,

Յաղթանակօրէն յետ մղած անջատման, կազմալուծումի և ծրագրային հակամարտութեան ուրսականը, Ընդհանուր Ժողովը աւետում է ձեզ մոայլ, յուսաբեկող մտքերի վախճանը և սկզբնաւորումը մի նոր շրջանի, որ զբոշմւած է մեր լաւ ոյժերի միութեամբ, ծրագրային համերաշխութեամբ և նոր ձեռնարկների որոշ յատակագծով։ Այդ նոր շրջանը պահանջում է նոր եռանդ, նոր թափ, ինչպէս և նոր տանջանք։

Զ. Հ. Անոհանջնեք տանջանքի առջև, որ մեր կուի յատկանիցն է, երկարտմեայ աղբիւրը մեր եռանդի և ջանքերի, ու սրտապնդւած գալիք օրերով, առաջ մղենը յեղափոխական կոււը, յանուն սօցիալիստական մեծ յաղթանակի։

Դէպի բարձր, դէպի աշխատանք, դէպի կոիւ։

«Դ Ր Օ Շ Ա Կ»

## ԶՈՐՈՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ

Համաձայն Ընդհանուր Ժողովի կարգադրութեան Ժողովի որոշումները բաժանւած են երեք կարգի՝

1) Մի մասը ընդհանրութեան համար, որը հրատարակեց «Դրոշակի» մայիսի յատուկ համարում։

2) Միւս մասը դաշնակցական Մարմինների համար, որը և ուղարկում է կենդրոնական կօմիտէներին, տպագրւած առանձին տետրակով։

3) Երրորդ մասը յատուկ Մարմինների համար, որոնց և կը տեղեկագրւին նրանց վերաբերեալ գաղտնի վճիռները, կազմակերպական ճանապարհով։

Ընդհանուր Ժողովի վերաքննած, լրացրած և վաւերացրած «ԿԱՆՈՆԱԳԻՐԸ» արգէն տպագրւեց և ուղարկւեց բոլոր Մարմիններին. առաջիկայում դրանով զեկավարւելու համար։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻԲՐՈ

1907, Մայիս

ԺԲՆԵՎ.

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հ. Յ. Դաշնակցութեան Դ. Ընդհանուր Ժողովը բացւեցաւ վիենան, աւտորիական սօցիալիստական ընկերութեան սրահին մէջ, 1907 թւի փետրւարի 22-ին։

Ժողովին մասնակցելու հրաւիրւած էին, ըստ Կանոնագրութեան, կազմակերպութեան հետեւեալ մարմինները։

Դուբան-Բարձրաւանդակ	Զ պատ.	Մեծ Քաղաքի կենդ.	Կօմ.	1 պատ.
Շամ . . . . .	1 »	Նաւահանգստի	»	1 »
Շամի շրջան . . . . .	1 »	Ուկանապատի	»	1 »
Լեռնապար . . . . .	1 »	Ժլատի	»	1 »
Լեռնավայր . . . . .	1 »	Նալբանդի	»	1 »
Արևելեան Բիւրօ . . . . .	1 »	Վլքժի	»	1 »
Արևմետեան Բիւրօ . . . . .	1 »	Ամերիկայի	»	2 »
Մոգաստանի կենդ. կօմ.	1 »	Բալկանեան	»	2 »
Ապառաժի »	1 »	Ցոցական մարմին	»	1 »
Այգեստանի »	1 »	Զիֆօն . . . . .	»	1 »
Բարի »	1 »	Եւրոպայի Դաշն. ուսանող.	1 »	1 »
Ջրաբերդի »	» » 1 »	Ռուսաստանի	» » 1 »	1 »

Բացակայ էին՝

Շամի ներկայացուցիչը հիւանդութեան պատճառով և Ոսկե-  
հանքի ներկայացուցիչը՝ որուն ձայնը, տեղական կօմիսէի որո-  
շումով, տրեցաւ Բալկանի ներկայացուցիչն:

Հրաւիրած էին՝

Զայնի իրաւունքով	:	:	:	6 հոգի
Խորհրդատու	»	:	:	5 »

## Ա Ն Զ Ա Տ Մ Ա Ն Խ Ն Դ Ի Բ Ը

(Առանց պատճառաբանութեան)

Ընդհանուր ժողովը լսելով Դաշնակցութիւնը երկու հատւածնե-  
րի՝ կովկասեան և թրքահայկական—բաժանելու մասին եղած զե-  
կուցումները և այդ առթիւ ծագած վիճաբանութիւնները որոշեց.

1) Յետ մղել անջատման առաջարկը.

2) Երկու գործունէութիւնն էլ վարել Հ. Յ. Դաշնակցութեան  
գրօշակի և ղեկավարութեան ներքոյ:

(Պատճառաբանութեամբ)

Ընդհ. ժողովը լսելով Դաշնակցութիւնը երկու հատւածների  
— կովկասեան և թրքահայկական—բաժանելու մասին եղած զե-  
կուցումները, ինչպէս նաև այդ առթիւ ծագած վիճաբանութիւն-  
ները և ինկատի ունենալով,

1) Որ հայ աշխատաւոր ժողովրդի այդ երկու հատւածների  
քաղաքական-տնտեսական կորիւը հիմնած է միևնույն Ծրագրի  
վրայ, վաւերացւած 1892-ին և լրացւած Գ. Ընդհ. ժողովի որո-  
շումներով և 1905-ի «Նախագծով»,

2) Որ թրքահայկական և կովկասեան գործունէութիւնները,  
ինչպէս այդ շեշտւեց ժողովի ընթացքում, ոչ միայն չեն վնա-  
սում այլ և նպաստում են երկու երկիրների աշխատաւոր ժողո-  
վրդի շահերի յաղթանակին,

3) Որ թրքահայ ժողովրդի շարժումը—որին կազմակերպու-  
թիւնը ծառայում է 17 տարիներից ի վեր, այժմ մանաւանդ, երբ  
թրքական բէժիմից դժոն տարբերը սկսել են շարժւել—պահան-

ջում է համերաշխ գործունէութեան համար մեր յեղափոխական  
ուժերի կրկնակի լարումն ու շաղկապումը,  
Որոշեց.

1) Յետ մղել անջատման առաջարկը, իբրև մի տեսակէտ,  
որ չէ հիմնած մեր աշխարհայեացքի և գործունէութեան վրայ  
և չէ բղխում կազմակերպութեան շրջանների որոշումներից (21  
մարմիններից 20-ը հակառակ անջատման, միայն մէկն է կող-  
մակից):

2) Երկու գործունէութիւնն էլ վարել Հ. Յ. Պ. գրօշակի  
և ղեկավարութեան ներքոյ:

3) Հաւատարիմ մնալով կուսակցութեան Ծրագրին, վայրե-  
րի գործունէութիւնը առաջ տանել տակտիքի ուրոյն եղանակով,  
յարմարացրած տեղական հանգամանքներին և պայմաններին:

## Տ Ա Կ Տ Ի Ք Ա Յ Ի Ն Խ Ն Դ Ի Բ Ը

ԱՊԱՍԱՄԲԱԿԱՆ ԶԵՐՆԱՐԿԻՆԵՐ

Ընդհանուր ժողովը լսելով զեկուցումները ապստամբական  
ձեռնարկների մասին և մանրամասն քննութեան ենթարկելով  
շշափած հարցը կայացրեց հետևեալ որոշումները.

1) . . . . .  
2) . . . . .

3) Երկում համապատասխան կազմակերպութիւններ առաջ  
բերել ժողովուրդը, առաջ բերել ռազմական ու կազմա-  
կերպիչ ուժեր, մեծ քանակութեամբ ռազմամթերք ու հարկաւոր  
դրամական օժանդակութիւն ուղարկել:

4) Գործունէութեան գլխաւոր վայրերում . . . .  
առաջացնել կազմակերպութիւններ, սրանց շուրջը լայն ժողովր-  
դական խաւեր համախմբելով, և յատուկ պատասխանատու մար-  
մին՝ այդ ամբողջ վայրի համար, որ իր շրջանի բոլոր գործերի  
կարգադրողն ու պատասխանատուն է:

5) Յանձնարարել նոյն մարմին երկրի լայն ռազմական  
ուսումնասիրութիւն անել և պատրաստել ռազմական ծրագիրներ  
այս կամ այն պատահականութեան համար:

6) Անակնկալ պատահարների դէպքում յիշեալ վայրերում պատասխանատու մարմինը կարող է դիմել ակտիվ ձեռնարկների, նախօրօք ստանալով Դաշնակցութեան Խորհուրդի համաձայնութիւնը:

### S E R I O R

Ընդհանուր ժողովը լսելով տերրօրի մասին եղած գեկուցումը և այդ առիթով տեղի ունեցած մանրամասն և բազմակողմանի վիճաբանութիւնը, որոշեց.

1) Կազմակերպել քաղաքական սիստեմատիկ տերրօր ուղղված կառավարական կարեոր ներկայացուցիչներին . . . ընդունելով ներկայ պայմաններում նրա ունենալիք խոշոր հետեանքները:

2) . . . . .

3) Ընդունել գործունէութեան վայր . . . . .

4) Հաստատել «Տերրօրական գործօն կօմիտէ» . . . . .

5) Ընտրել մի նախապատրաստական կօմիտէ, բաղկացած երեք ընկերներից, այդ գործի բոլոր նախապատրաստառութիւններն անելու և Գործօն կօմիտէն ստեղծելու համար:

6) . . . . .

### ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Թիւրքիոյ հայաբնակ վայրերուն մէջ:

Ժողովը լսելով ինքնապաշտպանութեան գործի կազմակերպաման վերաբերեալ գեկուցումը և նկատի առնելով ինքնապաշտպանութեան մասնախմբի եղակացութիւնները, որոշեց:

Լուրջ հիմքերու վրայ զնել ինքնապաշտպանութեան գործի կազմակերպումը . . . հայաբնակ վայրերու մէջ, առաջնորդ ունենալով հետեալ չորս կէտերը:

1) Ինքնապաշտպանութեան խմբերը կը զինւին տեղացիների նիւթական միջոցներով:

Ծանօթ.—Դաշնակցութիւնը կը նորունի պանդուխտ համագիւղացիների գինման հիմնագումարի համար նւէրներ, որոնք կը գործադրվին երկրի պատ-

կան մարմնի ձեռքով, ոչ բացառապիս նւիրատուներու գիւղին, այլ շրջանի գիւղախմբի համար:

2) Եթէ նոր կազմակերպւած մարմինները վատահութիւններշնչեն իրենց գործունէութեամբ և կազմի հաստատուն հանգամանքով, Դաշնակցութիւնը կրնայ, եթէ պէտք տեսնէ, փոխ տալ շրջաբերութեան գումար մը զէնքի շուկայ ստեղծելու համար։ Ծանօթ.—Դաշնակցութեան նախահաշչի մէջ կորոշվի այդ նպատակին յատկացնելիք առավելագոյն զումարի բանակը։

3) Ինքնապաշտպանութեան խմբերու ձեռք բերած՝ զէնքերը կը համարւին համայնական սեփականութիւն, կը գտնւին Դաշնակցութեան կօնտրոլի տակ և կը գործադրուին միմիայն անոր հրահանգներով։

4) Զինման գործը պէտք է կատարւի աստիճանաբար, ինքնապաշտպանութեան խումբերու կազմութեան և անոնց զինւորական կրթութեան զարգացման զուգընթաց։

Երկրի կազմակերպւած վայրերէ գուրս ևս ինքնապաշտպանութեան գործի սիստեմ ստեղծելու նպատակով որոշեցաւ։

1) Զեռնարկել կազմակերպելու այդ վայրերը. արևմտեան շրջանը թողնելով Արևմտեան Բիւրօիք շրջանային ժողովին, և Արևելեան Երկրի պատասխանատու մարմիններու և Արևելեան Բիւրօյի համաձայն գործակցութեան։

2) Վերի յօդւածի մէջ յիշւած մարմիններու կը յանձնարարւի մշակել ընդհանուր կանոնագիր մը ինքնապաշտպանութեան խումբերու և ժողովրդի զինման մասին, անոր կիրառումը պարտաւորիչ ընելով բոլոր մարմինների համար։

### Ա. Բ Ճ Ա Ի Ա Խ Մ Բ Ե Բ

Ժողովը քննելով արշաւախմբերի խնդիրը, յանգաւ հետեալ եղրակացութեան.

1) Ապագայում մեր մղելիք կուի մէջ, այլ և այլ յեղափոխական ձեռնարկների հետ միասին՝ արշաւախմբերն ևս կարող են օգտակար լինել, երբ ներսի վարիչ մարմինները վատահ են, որ այդ խմբերը կը դարձնեն կոիւր ազդու, լայն և յարատեւ-

2) Միջոցներ ձեռք առնել միլիցիայի սկզբունքով կամ այլ ձևով, առանց վարձի, մարտական դաշնակցական խմբեր մարդկեղագագայ այդ օրինակ գործողութիւնների համար:

### ԿՈՎԿԱՍԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Հնդհանուր ժողովը, լսելով կովկասի հայ ազգաբնակութեան ինքնապաշտպանութեան և զինսան գործի մասին եղած զեկուցումները և վիճաբանութիւնները՝ յանգաւ հետևեալ որոշման՝  
ա) Ինքնապաշտպանութեան գործը՝ իրրև համաժողովրդական գործ՝ պէտք է ամբողջովին թողնել ժողովրդին:

բ) Կուսակցութեան անդամները կարող են մասնակցել ինքնապաշտպանութեան՝ իրրև քաղաքացի անհատներ, աշխատելով մտցնել ժողովրդական միլիցիայի սիստեմը և կազմակերպել ժողովրդական ինքնապաշտպանութեան մարմիններ:

գ) Անակընկալ դէպքերում, եթէ ժողովուրդը հրաւիրէ Դաշնակցութիւնը՝ զեկավարելու ինքնապաշտպանութեան գործը, իր ժողովրդի պատասխանատութեամբ, նրա անունից և նրա միահամուռ աջակցութեամբ, Հնդհանուր ժողովը վերապահում է ապատութիւն տեղական մարմիններին՝ վարւելու ըստ իրենց հայեցողութեան:

### ՅՈՒՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵԿՈՒԹԻՒՆԸ

Ժողովը լսելով ցուցական գործունէութեան վերաբերեալ զեկուցումներն ու վիճաբանութիւնները և նկատելով՝

ա) Այն մեծ նշանակութիւնը, որ ունի ցուցական գործունէութիւնը տաճիկ բռնակալ ըէժիմը տապալելու, նրա հեղինակութիւնը կոտրելու տեսակէտից,

բ) Որ ցուցական գործունէութիւնն աւելի բացորոշ կերպով է շարժման մէջ դնում Տաճկաստանի խնամակալ պետութիւնների քաղաքական և անտեսական ընդհանուր և հակամարտ շահերը,

գ) Որ նա դիւրութիւններ է ներկայացնում աւելի ազդու կերպով արտահայտելու բողոքող տարրերի ձգտումները և այդպիսով ներկայանում է ագիտատորական մեծ ազգակ ցնցելու համար և մահմեդական մասսան,

դ)

### ՈՐՈՉԵց՝

1) Հնդկունել ցուցական գործունէութիւնը շարունակելու անհրաժեշտութիւնը կազմակերպութեան առաջիկայ տակտիքի մէջ,

2) Կեդրոնացնել Ցուցական գործունէութիւնները...

3) Կախման մէջ չը դնել այդ տեսակի ձեռնարկները Երկրի ապստամբական շարժումներից և օգտւելով քաղաքական ներքին կամ արտաքին յարմար մօմէնաներից:

4) Զգտել ապահովել Թիւրքիայի ոչ-հայ դժգոհ արարերի գործակցութիւնը,

5) Ցուցական մարմնի կազմը, արածադրելի գրամական միջոցների սահմանները և իրաւասութեան հիմնական կէտերը որոշել Հնդհանուր ժողովում:

### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժողովը ծանօթանալով . . . Դաշնակցութեան կազմի և պրօպագանդի այժմեան վիճակին և նկատելով՝

ա) Կազմի և պրօպագանդի սահմանափակ վիճակը.

բ) Այն խոշոր գերը, որ կարող է կատարել յեղափոխական գործունէութիւնը այդ վայրում և թէ շրջակայքում, աշքի առաջ ունենալով վայրի քաղաքական կարևոր նշանակութիւնը,

### ՈՐՈՉԵց՝

Ցանձնարարել Կազմակերպական Մարմիններին, յատկապէս Արևմտեան Բիւրօյին և Բ. Կօմիտէին չխնայել ոչ մի ջանք. ուղարկել այդտեղ կարող ընկերներ լայն կազմակերպութիւն, առաջ բերելու . . . և շրջակայքում:

Վ Ե Բ Ն Ա Շ Ի Ն Ի Շ Ր Զ Ա Ն

### ԼԵՌՆԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՒՆԵԿՈՒԹԻՒՆՆ

Բ Ա Ս Ի Շ Ր Զ Ա Ն

Ս Ի Մ Ի Շ Ր Զ Ա Ն

## ԶԻՆԱ—ՊԱՅԹՈՒՑԻԿ

Նկատելով որ անհրաժեշտ է մեր յեղափոխական ձեւնարկ ներու համար ունենալ ըստ կարելոյն շատ հմուտ արհեստաւոր ներ զինագործական-պայթուցիկ և այլ յարակից արհեստներու համար, Ընդհանուր ժողովը որոշեց.

1) . . . . . զանազան վայրերուն մէջ ինչպէս նաև վրէժում, հիմնել արհեստանոցներ, ուր ընդունակ և տրամադրելի ընկերներ վարժեն զինական արհեստադիտական այլ և այլ ճիւղերու մէջ, մասնաւորապէս կանոնաւորել . . . արհեստանոցը:

2)

3)

4)

## ՀԱՄԵՐԱՇԽ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ ԹԻՒՔԻՈՅ ԱՅԼԱՅԱՐԻ ՑԵՂԵՐՈՒ ՀԵՏ

Ընդհանուր ժողովը լսելով զեկուցումը Թիւքիոյ յեղափոխական տարրերու հետ համերաշխութիւն կայացնելու մասին, եկաւ հետևեալ եզրակացութեան.

Խորին ուրախութեամբ դիտելով թիւքը ժողովրդի մէջ ծայր տւած հակառակարական դժողութեան երեսյթները, նպաստաւոր վայրեանը հասած կը նկատւի համերաշխութեան գաղափարի իրականացումը գործնական հողի վրայ դնելու, —ինչ որ, դժբախտարար, ցարդ չէր յաջողած Դաշնակցութեան՝ հակառակ տարիներէ ի վեր ձեռք առած միջոցներուն, հակառակ իր ծրագրին և նախորդ իր Ընդհանուր ժողովի որոշումներուն:

Ուստի ժողովը ստիպողաբար կը յանձնարարէ . . . մարմիններուն ամեն կերպով աջակցիլ թիւքը ժողովրդի դիմադրի տարրերուն զեկավարելով զանոնը իրենց կուին մէջ այդ բէժմի դէմ: Այդ գործակցութիւնը պէտք է այնպէս կարգաւորել և առաջ տանել, որ թիւքը բողոքող և ըմբուտ տարրը կարկառուն կերպով ասպարեզ ելլէ, և կառավարութիւնը զրկւի ամբոխային

կրօնամոլութիւնը հայ ժողովրդի և հայ յեղափոխութեան դէմ գրգռելու առիթէն:

Այս տեսակէտներէն առաջնորդւելով՝ ժողովը կը յանձնարարէ,

1) իր . . . . . մարմիններուն, որպէսզի ամեն կերպ աշխատին սկիզբը գնելու համերաշխ գործակցութեան և առաջ բերեն համերաշխութեան մարմիններ:

2) . . . . . պատշաճ մարմիններուն՝ որպէսզի նախալարաստական բանակցութիւններ սկսին — յարմարագոյն եղանակով՝ յեղափոխական թիւքը և այլ տարրերու խմբակցութեանց հետ, որոնց բաղաքական հայեացըները և ձգտումները աւելի կը մօտենան Դաշնակցութեան սկզբունքներուն, ինչպէս նաև աշխատին անոնց պրօպագանդին ուժ տալ, տարածելով . . . թիւքը ժողովրդին մէջ անոնց հրատարակութիւնները, հրահանգելով միանգամայն . . . . մարմինները ամեն կերպով աջակցիլ աշխատութեան:

3) . . . . .

4) Նկատելով մանաւանդ որ Թիւքիոյ մէջ առանձին ազգութիւններու ինքնուրոյն ձգտումները, իրենց անջատ գործունէութիւնով, չեն կազմել միացած ընդհանուր ուժ մը ընդհանուր թշնամուն դէմ, աշխատիլ ձգտիլ Թիւքիոյ այլ ազգութիւններու յեղափոխական կուսակցութիւններու և տարրերու մէջ համերաշխութիւն առաջ բերել և կազմել յեղափոխական Դաշնակցութիւն մը, ֆեդերատիվ սկզբունքի վրայ հիմնած քաղաքարով, որ ապահովէ բոլոր ազգութիւններու իրաւունքը: Այս գաղափարի իրականացման համար՝ առաջին պատեհութեամբ իսկ հրաւիրել համաժողով մը վերոյիշեալ տարրերու մասնակցութեամբ:

Միենոյն ատեն թիւքերու մէջ տարածւած անհիմն թիւքի մացութիւններուն վերջ տալու համար, ժողովը պարտք կը համարի յայտարարել, որ Դաշնակցութիւնը Թիւքիոյ մէջ ունեցած չէ և չունի անջատական ոչ մէկ ձգտում, այլ իր նպատակն է եղած ազգերու կատարեալ հաւասարութիւն, և տեղական լայն ինքնավարութեան սկզբունքի համաձայն՝ հայկական վեց վիւայիններու մէջ վարչական ինքնավարութեան հաստատումը, ինչ որ չը հակասեր միւս ազգերու իրաւունքին:

## ՀԱՅ-ԹԻՒՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒԹՅՈՒՆԵՐ

Քննութեան առնելով կովկասեան մարմինների մանրամասն գեկուցումները հայ-թրքական ընդհարությունների մասին, որոնք աղմկեցին ամբողջ Անդրկովկասը 1905 և 1906 թւականներին, Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը, լցւած խորագոյն վշտով երկու հարեան ժողովուրդները կործանող այդ իրողութեան հանդէպ, և նկատելով որ,

1) Այդ թշնամութիւնը զգալապէս վնասում է ընդհանուր յեղափոխութեան գործին,

2) Որ ցարական կառավարութիւնը բոլորովին արամագիր չէ հրաժարւել իր պառակտող քաղաքականութիւնից,

3) Որ թուրք անգիտակից ամբոխը հարստահարող բէզութիւնն ու հոգեորականութիւնը, մերթ իրենց շահերից դրված, մերթ արտաքին քաղաքական պրօպագանդի ազգեցութեան տակ, շարունակում են շահագործել մասսաների տգիտութիւնն ու հականայկական տրամադրութիւնները,

Ո րոշեց.

ա) Յանձնարարել գաշնակցական բոլոր մարմիններին՝ համերաշխութեան ընդհանուր և զօրեղ պրօպագանդ մղել, գրաւոր և բանաւոր, ոչ միայն հայ, այլև թուրք ժողովրդի համար:

բ) Զանք չը խնայել առաջ բերելու, ուղղակի կամ թիւրք մտաւորականութեան միջոցով, յեղափոխական կազմակերպութիւններ մեր հարեան ժողովրդի շարքերում, իբրև լաւագոյն միջոց՝ խլելու անգիտակից մասսաները մոլորեցնող թուրք տարրերի ազգեցութիւնից:

գ) Խստօրէն հալածել հայ ժողովրդի բոլոր խաւերի միջից այն տարրերն, օրգանները և անհատները, որոնք խօսքով թէ գործով, յաճախ անգիտակցարար, գրգռում են փոխադարձ ատելութիւն և առիթ տալիս թշնամութեան վերսկսման:

դ) Աջակցիլ այն թուրք կազմակերպութիւններին, հրաժարակութիւններին և անհատներին, որոնք ծառայում են երկու ժողովուրդների համերաշխութեանը և մերձեցմանը:

ե) Յեղափոխական կապեր հաստատել հայ և թուրք աշխատաւորների միջև՝ քաղաքներում և գիւղացիութեան մէջ՝ գիւղերում, միացած ուժով կոիւ մղելու քաղաքական և տնտեսական

այն գործօնների դէմ, որոնք կասեցնում են երկու ժողովուրդների քաղաքական և տնտեսական ազատագրութիւնը:

Այս յանձնարարման հետ միասին՝ Ընդհանուր ժերմ յոյս է տածում, որ հակառակ ընթացիկ գժւարութիւնների և լայնատարած յուետեսութեան, այսօրւայ ատելութիւնն ու պառակտումը կընկճւին և տեղի կը տան միջազգային այն համերաշխութեան, որը պիտի լինի ամենազօրեղ պատւանդանը մեր ապագայ կուի ու երկու ժողովուրդների յեղափոխական յաղթանակին:

## ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԵՐԻ ՎՐԱՅԻՆԵՐԻ ՀԵՏ

15/5 - 2002

Խորապէս կողմնակից հայերի և վրացիների քաղաքական ներգաշնակ գործակցութեան, Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը հրահանգում է կուսակցութեան բոլոր մարմիններին և ընկերներին, իրենց յեղափոխական գործողութիւնների, ինչպէս և գրաւոր ու բերանացի պրօպագանդի ընթացքում՝ երբէք չը մոռանալ այն սերտ կապը, որ պիտի լինի վրացի և հայ աշխատաւորների միջև, հանդէպ քաղաքական և տնտեսական այն կուի, որով բանկւած է Անդրկովկասը:

Կապւած միմեանց հետ հայրենիքով, քաղաքական և տնտեսական շահերով, նոյնիսկ կուի տակախով, երկու ժողովուրդները պէտք է գործեն ձեռք-ձեռքի տւած, ներշնչւած նոյն տենչով, և հետևաբար, փոխադարձ անհամաձայնութեան և գժտութեան ամենափոքրագոյն նշանն անգամ պիտի նկատւի քաղաքական մեծ սխալ երկու ժողովուրդների համար:

Դրդւած այս տեսակէտներից՝ Ընդհանուր ժողովը թերգում է Դաշնակցական զեկավար մարմիններին՝ ամենամօտիկ կապեր հաստատել և, ի հարկին, ձեռնարկներ անել վրաց ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող յեղափոխական և սօցիալիստական կուսակցութիւնների հետ, գուրս չը գալով, հարկաւ, մեր ծրագրի և տակախը սահմաններից:

Ենշտելով իր այդ անվերապահ ցանկութիւնը, Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը ստիպւած է, անկեղծ ցաւով, մատնանիշ անել այն փաստը, որ Վրաց մէջ գործող կուսակցութիւններից ամենախոշորը, ուռւական սօցիալ-դեմոկրատիայի կովկասեան բաժինը, հակառակ այն վարդապետութեան ոգուն, որի



դրօշակիրն է ուզում հանդիսանալ, իր գործելակերպով, որ հեռու է շիտակութիւնից, և իր պրօպագանդի ձևով, որ յաճախ շօվինիզմի կնիքն է կրում, փոխանակ նպաստելու երկու ժողովուրդների քաղաքական համերաշխ գործակցութեան, սերմանում է անօգուտ գրգռումն, անվատահութիւն և նոյնիսկ թշնամանք:

Առանց հետեւելու կովկասեան սօցիալ-դեմոկրատների գործելակերպին և շեղւելու քաղաքական շիտակ պայքարի շաւղից, Դաշնակցութեան բոլոր մարմինները հրաւիրուում են՝ մերկացնելով հանդերձ սօցիալ-դեմոկրատիական գործելակերպի ամբողջ տգեղութիւնը, անսասան և անյողդողդ առաջ տանել երկու դրկից ժողովուրդների ներդաշնակ գործակցութեան աշխատանքը, միշտ հաւատարիմ սօցիալիզմի և համերաշխութեան հիմնական պահանջներին:

### ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Անհրաժեշտ համարելով, մանաւանդ ներկայ քաղաքական մօմենտում, յեղափոխական տարրերի միութիւնը ընդգէմ բոնակալական կարգերի, ժողովը յանձնարարում է իր կովկասեան մարմիններին, աշխատել՝ գործակցութիւն առաջ բերել սօցիալիստական և յեղափոխական այն կուսակցութիւնների ու կաղմակերպութիւնների միջև, որոնք իրենց դաւանանքով ու գործելակերպով մօտ են Հ. Յ. Դաշնակցութեան, այսինքն,

1) Ընդունում են աշխատաւորական հայեցակետը և իրու գործունէութեան յենակէտ, և թիւս այլ աշխատաւորների, նաև գիւղացիութիւնը:

2) Զգուում են ազգային հարցը լուծելու ամենալայն փեղեցիայի միջոցով:

Այդ գործակցութեան նշանաբանն է լինելու՝ պաշտպանել համայն Ռուսաստանի աշխատաւոր ժողովրդի շահերը թէ Պետական Դումայում և թէ ընթացիկ կիանքում:

Այդ տեսակ գործունէութիւնը օր առաջ իրականալի դարձնելու նպատակով, ժողովը հրաւիրում է իր պատշաճ մարմիններին՝ ձգտել միջկուսակցական մի մնայուն մարմին կազմակերպել իրու շաղկապող օղակ յիշեալ աշխատաւորական տարրերի միջիւ-

### ՄԻ ԶԿՈՒՄԱԿՑԱՆ ԱՏԵԱՆ

Ընդհ. Ժողովը, բարձր պահելու համար յեղափոխական հմայքը և վերջ մը գնելու համար վերջերս տեղի ունեցած ցաւալի դէպքերուն, պարտաւորիչ կը դարձնէ միջկուսակցական իրաւարար ատեանները Հ. Յ. Դաշնակցութեան և ուրիշ կուսակցութիւններու միջև, համաձայն հետևեալ կէտերուն՝

1) Միջկուսակցական ատեանները կը կազմւին շահագրգռւող կողմերու ներկայացուցիչներէ, չէզոք ձեռնհաս անձերէ կամ ատեակցութիւններու ներկայացուցիչներէ, ըստ յարժարութեան:

2) Միջկուսակցական ատեանները կը կազմւին շրջանի պատասխանատու մարմնի հաւանութեամբ և գործակցութեամբ, ընդհանուր տեսակէտ մը պահպանելու համար այդ գործին մէջ:

3) Միջկուսակցական իրաւարար ատեան ունենալ այնպիսի կուսակցութիւններու կամ խմբակցութիւններու հետ, որոնք կը համակերպին այդ ատեաններու որոշումներուն՝ ամեն պարագայի տակ, և խոյս չեն տար այդ ատեաններուն հնթարկւելէ, իրենց անսպաս եղող պարագային ևս:

4) Միջկուսակցական ատեաններու որոշումներն անբեկանելի են և չեն ենթարկւել Ընդհանուր ժողովին:

5) Ատեաններու կազմութեան մասը ասնութիւնները մշակելը կը թողնւի բայօնական ժողովներուն:

### ՃՆՉԱԿԵԱՆ ԿԵՂՐՈՒՆԻ ԴԻՄՈՒՄԸ

Լսելով Ճնչակեան Պարիզի կենդրոնի վարչութեան պաշտօնական գիմուսմը, ուղղաւ Ընդհ. Ժողովին՝ Հայ Յեղ. Կուսակցութիւնների կօնդրէի միջկուսակցական ատեանի համերաշխութեան մասին, ինչպէս և այդ առիթով ժողովականների յայտնած կարծիքները Ճնչակեան այլեայլ հատւածների բռնած ընթացքի և զանազան վայրերում ունեցած գործունէութեան վերաբերմամբ, Ընդհ. Ժողովը,

1) Նկատելով որ Դաշնակցութեան և Ճնչակեան հատւածների մէջ համերաշխ գործակցութիւնը կարող է տեղի ունենալ

միայն այն գէպքում, երբ Հնչակեան տեղական մարմիններն իրենց առօրեայ ընթացքով և յեղափոխական գործունէութեամբ վստահութիւն կը ներշնչեն Դաշնակցական տեղական մարմիններին,

2) Նկատելով որ կուսակցական հողի վրայ տեղի ունեցած ընդհարումները իրենց ցաւալի հետեանքներով, վնասում են համերաշխութեան գործին և պահանջում են խաղաղեցնող միջոցների կիրառութիւն,

3) Ընդունելով որ Յեղ. կուսակցութիւնների կօնդրէի հարցը լուրջ նշանակութիւն և գործնական արժէք կարող է ունենալ այն գէպքում միայն, երբ երկրում, բացի դաշնակցական մարմիններից, գոյութիւն կունենան նաև Հնչակեան և այլ յեղափոխական մարմիններ,

Ո բ ո շ ե ց.

ա) Հայ Յեղափոխական կուսակցութիւնների կօնդրէի գումարումը ներկայում համարել վաղաժամ:

բ) Միջկուսակցական ատեանի առաջարկը ընդունել (համաձայն ներկայ ժողովի նախորդ որոշման):

Դրա հետ միասին ժողովը յոյս է յայտնում, որ առաջին կէտում յիշւած պայմանների առաջ գալը՝ ապագայում հնարաւոր կը դարձնեն Դաշնակցութեան համերաշխ գործակցութիւնը հայ յեղափոխական այլ մարմինների հետ:

Հնդհանուր ժողովը պարտք է համարում դարձեալ մի անշաբամ կրկնել, որ այլեայլ յեղափոխական կազմակերպութիւններին պատկանող՝ գործին նւիրւած և վստահելի անհատների և խմբերի հետ համերաշխորէն կոիւ մղելը ընդհանուր թշնամու դէմ (մանաւանդ Երկրի մէջ) եղել է և այժմ էլ պէտք է լինի Դաշնակցութեան բաղանքը և ձգառումը:

Նոյն այդ համերաշխութեան գործը պատրաստելու համար, Ընդհ. ժողովը յանձնարարում է բոլոր իր մարմիններին, ամեն կերպ խոյս տալ կուսակցական ընդհարումներից և ծագող վէճերն ու թիւրիմացութիւնները լուծել յիշատակւած միջկուսակցական ատեանի միջոցով:

Պ Ր Օ Պ Ա Գ Ա Ն Դ

Ե Կ Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ

Հիմւած այն տեսակէտի վրայ, որ գրաւոր և բանաւոր լայն պրօպագանդը կարեոր գործօններից մէկը պիտի լինի, կազմակերպական գաղափարները տարածելու և ձեռնարկները աջողեցնելու համար, Ընդհանուր ժողովը որոշեց առաջիկայում ևս ուժով կերպով առաջ մղել պրօպագանդի գործը այն հիմունքներով, որոնք մշակւած են նախորդ ժողովում և այն լրացումներով։

ա) ԵԽՐՈՊԱԿԱՆ ՊՐՕՊԱԳԱՆԴ

բ) ՌՈՒՍՍՍԱՆԻ ՊՐՕՊԱԳԱՆԴ

գ) ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊՐՕՊԱԳԱՆԴ

դ) ՊՐՕՊԱԳԱՆԴ ԵԲԿՐՈՒԻՄ

Համապատասխան մարմիններու յանձնելով թէ գրաւոր թէրանաւոր պրօպագանդի գործը, որոշած նախահաշվի սահմաններում, Ընդհ. ժողովը յանձնարարում է ղեկավարել հետեւալ որոշումներով։

I.

,,ՊՐՕՇԱԿ,, ԵԿ ԿԻՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Դրօշակ»ը մնում է կուսակցութեան պաշտօնական կհնդրոնական օրգան։

2)

3) Արտօնել խմբագրութեանը, եթէ հարկ տեսնի, «Դրօշակ»ը հրատարակել աւելի մեծ ծաւալով՝ ի հարկին՝ անել յաւելւածներ։

4) Ճշտութեամբ հետեւելով Ընդհ. ժողովի նախագծած ուղղութեան, աղատութիւն տալ խմբագրութեանը՝ մտնելու ինչպէս ծրագրային, նոյնպէս և տնտեսական-քաղաքական հարցերի և ուղղութիւնների մանրամասն մեկնաբանութեան և քննադատու-

թեան մէջ: Տեսական ինդիբները նրա մէջ պիտի բոնեն առաջնակարգ տեղերից մէկը:

5) Պարտաւորեցնել բոլոր մարմիններին՝ հաղորդելու պաշտօնական օրգանին կազմակերպական բոլոր ազգերը, որոշումները և թուոցիկները: Պաշտօնական բնոյթ ունեցող ազգերը չը տպագրել որևէ այլ թերթում, առանց հեղինակող ժարմի թոյլ-տուութեան:

6)

7)

8) Տեսական և հիմնական հարցերի մանրամասն ուսումնակրութեան համար՝ հրատարակել «Դրօշակ»-ին կից, տարեկան 2-3 անգամ, հատորի ձեռվ, առանձին հանդէս, մասնակցութեամբ մեր և օտար զրոյների:

9) Նկատի առնելով մամուլի այժմեան՝ համեմատաբար ազատ վիճակը Անդրկովկասում, հայերէն բրօշիւրների հրատարակութիւնը ժամանակակից և հրատարակել միմիայն այսպիսիները, որոնք կովկասում տպագրւել չեն կարող:

10) Հրատարակել, պրօպագանդային նպատակով, թիւրքաց և Կովկասեան շարժման և յեղափոխութեաններուած գրքոյիները, եւրոպական զանազան լեզուներով, գրւած ձեռնհաս անձանց ձեռքով:

11) Ոյժ տալ թուրքերէն, քիւրդերէն, ֆրանսերէն և այլ լեզուներով բրօշիւրներին, որոնց նպատակը պիտի լինի նպատել հայերի հետ ապրող այլ և այլ ժողովուրդների համերաշխութեան և մերձեցան:

II.

## ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԵՐ

Հրատարակել կովկասում,

1) Մի օրաթերթ, որ հանդիսանալով օրգան Հ. Յ. Դաշնակցութեան կովկասեան շրջանի, արձագանք պիտի տայ ընթացիկ տնտեսական-քաղաքական հասարակական բոլոր հարցերին՝ ղեկավար ունենալով մեր աշխարհայեացքը և արձարձելով մեր կուսակցութեան սկզբունքը:

2) Մի ամսագիր—հասարակական, գիտական, գրական—որի ծաւալի, բաժնեգնի և այլ մանրամասնութիւնների որոշումը թողնել կովկասեան բայօնական ժողովին:

3) Մի ոռուսերէն թերթ (շաբաթաթերթ կամ օրաթերթ), որի բուն նպատակն է լինելու պարզաբանել հայ կեանքն և առանձնապէս Հ. Յ. Դաշնակցութեան իսկական պատկերը թուաստանի հասարակութեան առաջ:

4) Շարունակել «Յառաջ»-ի գրադարանի հրատարակութիւնը (առնուազն 100 տպագրական թէրթ—3000 երես տարեկան), լոյս ընծայիլ մեր ծրագրին և գործելակերպին համապատասխան ինքնուրոցն և թարգմանական գրւածքներ, գիտական-հասարակական ընդհանուր հարցերի շարքերում՝ կարենը տեղ տալով նաև տաճկահայ դատի և երկրի տնտեսական-սօցիալական ուսումնակրութեան վերաբերեալ աշխատութիւններին (տաճկահայ քարբառով և այլական մասին):

III.

## ՕՐԳԱՆՆԵՐ ԵԽՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Ժողովը որոշեց.

1) Շարունակել Պարիզի «Pro Armenia»-ի հրատարակութիւնը՝ մանաշելով թէ օրգանի և թէ խմբագրական մարմնի մատուցած կարենը ծառայութիւնները հայոց հարցին:

2)

3) Մտցնել «Pro Armenia»-ի էջերի մէջ տեղեկութիւններ՝ Դաշնակցութեան գործունէութեան մասին:

4)

5) Փակել Լօնդոնի «Pro Armenia»-ի հարցը, և նրա հրատարակութիւնը համարել, ներկայ պայմաններում, անկարենը, յանձնելով անգլիական պրօպագանդի գործը . . . . .

6) Եւրոպական մամուլի մէջ պրօպագանդ անելու համար, բիւղէի սահմանած չափով, թղթակիցներ պահել:

7) Դրամակէս նպաստել . . . . . հրատարակուղ թերթին՝ զբաղւելու մեր հարցով:

Աչքի առաջ ունենալով Ռուսաստանում առաջ եկած բարեփոխութիւնները, ժողովը յանձնարարում է պատշաճ Մարմիններին՝ ուշագրութիւն դարձնել նաև այն պրօպագանդի վրա, որ կարող է կատարել Ռուսաստանում դիմադիր տարրերի աջակցութեամբ:

## Կ Ա Զ Մ Ա Կ Ե Բ Պ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ց Ե Ր

ԲԲՆԻ ՀԱՆԳԱՄԱԿՈՒԹԻՒՆ

Լսելով բռնի հանգանակութեան մասին եղած զեկուցումն ու վիճաբանութիւնները, Ընդհանուր ժողովը աչքի առաջ ունենալով՝

1) 1904 թւի Ընդհ. ժողովի որոշումը, ուր այդ ձևի հանգանակութիւնը նկատած է իրբե բացարձակ չարիք:

2) 1905 թւի Խորհրդի վճիռը, որը կարգադրում է՝ «Պատարեցնել Դրամ կօմիտէի կողմից նոր դիմումներ անելը»:

1) Այս բարոյական լրումը, որ առաջ է բերել բռնի հանգանակութիւնը հասարակական լայն խաւերում՝ թուլացնելով միաժամանակ մարմինների գործունէութիւնը.

2) Պաշնակցութեան և այլ մարմինների ուսնեցած դառն փորձերը, հակայեղափոխական հետևոնքները....

Ո Ռ Ո Հ Ե Յ  
1) Իսպառ արգելել բռնի միջոցների գործածութիւնը՝ հանգանակութեան գործում.

2) Ամենախիստ պատասխանատութեան ենթարկել այն անդամներին և մարմիններին, որոնք կը շարունակեն դիմել բռնի միջոցների.

3) Ազգու միջոցներ ձեռք առնել վերջ տալու այն բռնի հանգանակութիւններին, որ կատարում են այլեայլ բաղդախընդիրներ, կազմակերպութեան անոնից, գաղտնի կամ խարդախ միջոցներով.

4) Ժողովի այս որոշումը յայտարարել կազմակերպութեան պաշտօնական օրգանի մէջ:

### «ՆԱԽԱԳԻԾԸ» ԵՒ ԽՈՐՃՈՒՐԴԻ ԻՐԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Հնդհանուր ժողովը, լսելով ներկայացրած պեկուցումը՝ «Խորհուրդի իրաւասութեան մասին՝ Նախագծի հրատարակութեան գործում» և այս առթիւ տեղի ունեցած կարծիքների փոխանակութիւնն ու վիճաբանութիւնները՝ հասաւ հետևեալ եղակացութեան. Խորհուրդը՝ հիմնելով Դաշնակցութեան հիմնական Ծրագրի, գ. Ընդհանուր Ժողովի կողմից կովկասեան գործունէութեան մասին տած որոշումների ոգու, կովկասեան շրջանային ժողովի այս առթիւ տած որոշումների, ինչպէս նաև կեանքի հրամայողական պահանջների վրայ պարտաւոր էր հրատարակել «Կովկասեան Նախագծը» իբրև ուղեցոյց կովկասահայ կեանքի բաղդաքական և արևտեսական գործունէութեան, վերապահելով նրա վերջնական հաստատութիւնը ներկայ Հնդհանուր ժողովին:

### ԵՐԿՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հնդհանուր ժողովը՝ լսելով՝  
Երկիրը ուսումնամասիրելու և այնտեղ ուսումնամասիրողներ ուղարկելու մասին և կատարելով այս առիթով մտքերի փոխանա-

1) Կնել այդ ուսումնամասիրութիւնը՝ գլխաւորապէս վիճակագրական և ուազմական-յեղափոխական տեսակէտից՝ աւելի լայն և դիտական հիմքերի վրայ:

2) Պատրաստել մի հարցական-ծրագիր և ուղարկել երկրի մարմիններին և ընկերներին՝ վիճակագրական, ազգագրական, տնտեսագիտական և քաղաքական ուսումնամասիրութիւններ անելու համար:

3) Գտնել . . . . ձեռնաս անձինք՝ յանձնելով նրանց կազմակերպութեան հաշով երկիր մտնել (մեր ընկերների ուղեցութեամբ) ուղմական և քաղաքական ուսումնամասիրութիւններ անելու նպատակով:

4) Բոլոր միջոցներով նպաստել մտաւորական լնկերների մտնելուն աւելի մեծ թւով նախօրօք պատրաստելով նըրանց՝ այդ աշխատանքի համար:

5) Անհրաժեշտորէն պատրաստել հայկական գաւառների մանրամասն և մեծագիր քարտէզ:

6) Կազմել մի յատուկ մարմին «Ուսումնամասիրող Մարմին» անունով, այդ ամբողջ գործը կարգադրելու համար, հիմնած վերի որոշումների վրայ:

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԻՒՐԾ

Հնդհանուր ժողովը լսելով Բրիւքսէլի Միջազգային Սօցիալիստական Բիւրօյի կողմից եղած առաջարկը (տես «Դրօշակ» 1905 թ. 6) և հիմնելով մեր ծրագրի հիմնական կէտերի վրայ, որոշեց՝ Յանձնարարել Արևմտեան Բիւրօյին՝ րանակցութեան մէջ մտնել յիշեալ Բիւրօյի հետ, յայտնել նրան՝ Դաշնակցութեան յարումը Միջազգային Սօցիալիստական Կօնգրէսների որոշումներին և միջոցներ ձեռք առնել կարգաւորելու Դաշնակցութեան մասնակցութիւնը Միջազգային Սօցիալիստական Բիւրօյին և Կօնգրէսներին:

### ԱՌԱԶԻՒՅԱՅ ՀՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Հնդհանուր ժողովը մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշեց.

1) Առաջիկայ, Հինգերորդ Հնդհանուր ժողովը նշանակել տալ տարւայ վերջերը, ոչ ուշ քան 1908-ի աշունը:

2) Հնդհանուր ժողովի տեղի որոշումը թողնել երկու Բիւրօներին, հրահանցելով որ ամեն ջանք գործ դրւի ժողովը կայացնելու Երկրին մօտիկ սահմաններում,

3) Արտակարգ պարագաների դէպում թողնել Խորհրդին՝ հրաւիրելու արտակարգ Հնդհանուր ժողով:

## Դ Ա Ղ Ո Ւ Թ Ն Ե Ր

Հնդհանուր ժողովը քննելով հայկանի, Ամերիկայի, Եգիպտոսի, Պարսկաստանի և հարաւային Ռուսաստանի զաղութների մասին ներկայացրած զեկուցումները՝ յանձնարարում է իր այնաեղի մարմիններին.

1) Կազմուկերպական-դրամական աշխատանքներին կից հիմնադրել մի լայն պրօպագանդ, գրաւոր և բերանացի, նպատակունենալով տարածել մեր ծրագրի սկզբունքները և սերտ կերպով կապել գաղութները յեղափոխական գործի հետ:

2) Ոչինչ ջանք չխնայել՝ յարաբերութեան մէջ դնելու հայ գաղութները՝ տեղական աշխատաւորական շրջանների և սօցիալիստական կազմակերպութիւնների հետ, իրու մի ցանկալի մէթօդ փոխադարձ համերաշխութիւնը գորացնելու համար:

3) Տեղական և օտար մամուլի մէջ պրօպագանդ մղել յօգուտ հայ ժողովրդի դատի, ինչպէս և այն քաղաքական նպատակի, որին ձգտում է Դաշնակցութիւնը:

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Նկատելով որ պարսկական ներկայ շարժումը կարող է գառնալ ժողովրդական արթնացման բնոյթ ունեցող հասարակական խոշոր երևոյթ՝ թէ Պարսկաստանի, թէ Արևելքի համար և գլուխելով գրա տարածելին ու լայնանալը ցանկալի թէ համամարդկային, թէ հայկական տեսակէտից,

Հնդհանուր ժողովը յանձնարարում է Պարսկաստանի դաշնակական մարմիններին և անհատներին՝ բոլոր միջոցներով նըպաստել այդ շարժման զարգացման, մտցնելով պարսկական արթնացման մէջ այն ազատագրական, ուամկավարական և աշխատաւորական ողին, որը բղիսում է Դաշնակցութեան ծրագրից:

Կ Ա Բ Գ Ա Պ Ա Հ Ա Կ Ա Ն

ԴԺՈՂՈՎԻԹԻՒՆՆԵՐ ՈՒ ԲՈՂՈՔՆԵՐ

Մանրամասն քննութեան առնելով դժգոհութիւնների ու բողոքների այն փաստելը, որոնք արձանագրւած են տեղեկագրերի ու անհատական դիմումների մէջ, Հնդհանուր ժողովը ամեն մի կարևոր դէպքի համար յատուկ կարգադրութիւն անելով, միաժամանակ որոշեց.

1) Յանձնարարել Դաշնակցական բոլոր մարմիններին՝ հաղորդելու ի գիտութիւն իրանց շրջանի հասարակութեան, որ ոչ մի գեղծութիւններուն, և ողջ մարմնի անդամներու՝ Սահմանադրութիւնները, որոշեց գոմի:

Ների և խմբերի կողմից, չի մնայ առանց անկողմնապահ քննութեան և խիստ պատճի:

2) Դիւրութիւն տալ, որ ամեն ոք, կուսակցական թէ անկուսակցական, հնարաւորութիւն ունենայ, կազմակերպութեան զեկավարող մարմիններին իրաց տալու ժողովրդի մէջ եղած գանգատնելն ու բողոքները:

3) Յանձնալ Արևելեան և Արևմտեան բիւրօններին, իբրև Հնդհանուր ժողովի որոշումների ճշշա գործադրութեան վրայ հսկող օրգաններ, պատասխանաւութեան կանչել այն բոլոր Դաշնակցականներին՝ զինուոր, պրօպագանդիստ, հայդուկ, կազմակերպող՝ որոնք իրենց քայլերով արդար բողոքի առիթ են տալիս, ինչպէս և այն մարմիններին, որոնք վարագուրում են այդ տեսակ քայլերը կամ թերանում պատժելունրանց հեղինակներին:

Հնդհանուր ժողովը լիայոյ է որ իր այս հրահանգի ճիշտ կիրառութեամբ՝ կարելի պիտի լինի արձատախիլ անել կուսակցութեան անւան հետ, յաճախ անհիմ կերպով, կապւող զեղծումները, և ներշնչել հայ ժողովրդի բոլոր խաւերին այն գիտակց վստահութիւնը, որ միշտ վայելել է Դաշնակցութիւնը ոչ միշն կողմնակիցների այլև ազնիւ հակասակորդների կողմից:

## ՈՐՈՇՈՒՄ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ

Հնդհանուր ժողովը նկատի առնելով Ցուցական մարմնի տեղեկագիրը, Քննիչ Յանձնախմբի զեկուցագիրը, իր բոլոր յարակից դօկիւմաններով, ինչպէս նաև Ցուցական մարմնի ներկայացուցիչ Սափօյի պատասխան-զեկուցումը Յանձնախմբի եզրակացութիւններուն, և ողջ մարմնի անդամներու՝ Սափօյի, Թորկացութիւններուն, և նույն մարմնի բերանացի յայտարարութիւնները, որոշեց գոմի:

Զը ծանրանալ ձեռնարկին տեխնիքական կողմի մանրակերպկիտ ուսումնասիրութեան վրայ, և քննութեան առնել Ցուցական մարմնի գործունէութեան կազմակերպական և ընկերական-բարոյական կրկին տեսակէտները: Ուստի,

1) Նկատելով որ Ցուցական մարմնի անդամները, էլլէսի մահէն ետք, «Ճեռնարկի» պատրաստութեան վերաբերեալ իրենց բոլոր խորհուրդներուն և անոնց կիրառութեան մէջ, փոխանակամեն հնարաւոր միջոց ձեռք առնելու, ձեռնարկին յաջողութեան հաւանականութիւնները բաղմապատկելու, լնդիակառակը՝ տարամերժ մտահոգութիւնը ունեցած են, ամեն բանէ առաջ, իրենց անձերու փրկութիւնը ապահովել, խուսափելով իրենց ստանձնած մէծ պատասխանատութենէն.

2) Նկատելով՝ որ լոկ իրենց վլուխն ազատելու այդ սկեսուն գաղափարէն մղւած, Ցուցական մարմնի անդամները գիտա-

կեց անհոգութեամբ մը թերացեր են ուշազրութեան առնելու և ըստ այսմ կանսել կամ մեղմել փորձելու այն վտանգները, որոնք կոպանային նաև նոյն վայրը գործող օժանդակ ընկերներուն, ընկերներ՝ որոնք դատապարտւեցան մահան և երկարատես բանտարկութեան պատիմերու.

3) Նկատելով որ Յուցական մարմինը իր ընկերական յարաբերութիւններուն մէջ ընդհանրապէս այլանդակ վարմոնք մը ցուցադրած է, և ինչ որ մասնաւորապէս եզական է Դաշնակցութեան տարեգրութիւններուն մէջ՝ այն վրդովիչ ընթացքն է, որով այդ մարմինը հետամուտ եղած է, թէ գրաւոր կերպով (Վ. Նի տաճնագրութեան մէջ) և թէ թերանացի տարածայնութիւններով, արատաւորել թանկապին յիշտակը պարտականութեան դաշտին վրայ ինկած մեր անմոռանալի ընկեր էլլէնին, Ս...-ի գժրախտ արկածը ներկայացնելով իբր դաւ մը՝ նիւթւած էլլէնի կողմէ ծագունի գէմ.

Ժողովը լուսարանւած համարեց Յուցական մարմին ծանր թերացումը ընկերական պարտականութիւններու մէջ և անոր պատախանատութիւնը «Ճեռնարկի» անյաջողութեան մէջ, այն չափով, որ այդ արդինք էր այդ մարմին անդամներու անձնութեան պահպանին, պէտք չը տեսաւ անդրագոյն ընսութեան և զատի:

Միևնույն ատեն, աներկդիմի կերպով ապացուցւած գտնելով որ Սաֆօն եղած է զեկավոր էլլէնի մահէն ետք Յուցական մարմին գործերուն, պատրաստողը՝ այդ մարմին դօկիւմաններուն, հեղինակը՝ էլլէնի և Շապուհի մահւան շուրջը կուտակւած կասկածներուն և զրպարտութեան, և գլխաւոր ստեղծիչը այդ մարմին շուրջը տիրող անբարոյական հեղծուցիչ մթնոլորտին:

1) Յուցական մարմին անդամ Սաֆօն իսպառ արտաքսել Հ. Յաշնակցութենէն և այդ մասին յայտարարել պաշտօնական օրգանին մէջ:

2) Յուցական մարմին անդամներ՝ Ա. . . , Թ. . . և Ք. . . հետացած նկատել կազմակերպութենէն, յայտնելով այդ մասին կազմակերպական ձամբով Դաշնակցական բոլոր մարմիններուն, և տալ անոնց իրաւունք ներկայացնել Դաշն. Խորհրդին մեղմացուցիչ բացատրութիւններ և իրենց անկեղծ դղժան ապացոյցներ. Խորհրդին լիազօրութիւն կը տրւի ըստ այսմ փոխել այս որոշումը եթէ հնարաւոր տեսնէ:

3) . . . . .

„Վ Ա Ր Դ Ո Ւ Խ Ն Դ Ի Բ Ը Ը Ը Ը“

Ընդհանուր ժողովը, ապրիլի 28-ի նիստի մէջ, լսելով Վար-

դոի գործին համար կազմւած Դատական յանձնաժողովի մանրամասն զեկուցումը՝ եկաւ հետևեալ եզրակացութեան.

1) Նկատելով, որ պաշտօնական թէ անպաշտօն բազմաթիւ փաստաթղթեր կհաստատեն Վարդոի անարդարանալի մեղաւորութիւնը՝ գիտակցաբար իւրացուցած և իւր անձնական պէտքերուն ծախսած ըլլալուն համար Բալկանի Կենդր. Կօմիտէի 2139 ոսկի լէվ և 4673 արծաթ լէվը, ինչպէս նաև արևելեան Բիւրօյի կողմէն իրեն խրկւած՝ կազմակերպական 2000 ըուբլին, ընդամենը՝ 12,112 ֆրանկ.

2) Նկատելով որ գրամական այս յայտնի գեղծումներէն զատ՝ Վարդոն շահագործած է նոյնիսկ նահատակ ընկերոջ մը՝ Պետրոս Սերէմճեանի յիշատակը, հանգանակութիւնը բանալով իւր թերթին մէջ՝ հրատարակելու համար նոյն ընկերոջ գրութիւններուն հաւաքածուն, և այդ հանգանակութենէ գոյացած հանրային գրամն և իւրացուցած է առանց յատկացնելու իսկական նպատակին.

3) Նկատելով վերջապէս որ Վարդոն իւր բոլոր անմաքուր գործերը և, մանաւանդ, իւր զեղծումները չըմեղելու համար հանրային կարծիքին առջև՝ դիմած է ամեն տեսակ անորակնի միթցներու՝ ջանալով արատաւորել Դաշնակցութիւնը: Դաշնակցական ամենամաքուր գործինները, նկատելով կասկածի ստւեր ձգել անոնց գործունէութեան վրայ, անւանարկութեան ու խեղաթիւրման հակասական ամեն փորձ ի գործ դնելով իւր թերթին մէջ:

Ո Ր Ո Չ Ե Գ.

Հաստատել դատական յանձնաժողովի եզրակացութիւնը և Բալկանի շրջանային ժողովի որոշումը, յանձնարարելով անոնց գործադրութիւնը՝ պատշաճ մարմիններուն, այն է՝

ա) Արևելու բիւրօյի միջոցով պահանջել, որ Վարդոն իւրացուցած 12,112 ֆր. գումարը վճարէ՝ յայտարարելուն 15 օրւայ ընթացքի մէջ.

բ) «Դրօշակալ»-ի մէջ յայտարարել Վարդոի գեղջնական արտաքսումը Դաշնակցութենէն՝ իբրև զեղծարար, յեղափոխութիւնը արատաւորող և անբարոյական անձնաւորութիւնը:

գ) . . . . .

,,ԺԱՄԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻՅՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒԻՐԴԻ“  
«Միերանական խումբ»

Քննիչ յանձնաժողովը, հիմնած Ընդհանուր ժողովին ներկայացւած պաշտօնական զեկուցումների և նոյն ժողովի դիւնանում եղած գրաւոր գոկումնենտերի վրայ, ինդիրը մանրամասն քննելուց յետու եկաւ հետեւեալ եզրակացութեան.

1) «Ժամանակաւոր զինուրական խորհուրդ» անուն կրող մարմինը Հ. Յ. Դաշնակցութեան մէջ կազմակերպւած է ապօրինի ձանապարհով:

2) Այդ ապօրինի մարմինը շինել և գործ է ածել կեղծ կնիք  
չ. Յ. Դաշնակցութեան անունով:

3) Հրատարակել է Յ. Յ. Դաշնակցութեան անունից մի շարք  
թուոցիկներ և յատուկ ամբաստանագրեր, ջանալով ամենաստոր  
զրաբարտութիւններով արատառը կաշնակցութեան 1904-ի  
Ընդհ. Ժողովի կողմից ընտրւած մարմինները:

4) Տաճկահայ դատի պաշտպանութեան պատրւակով՝ երևան  
գոլով և նրա անունը շահագործելով, բուրժուական և հակադաշ-  
նակցական այլ մութ տարրերի ձեռքը գործիք է եղել կազմա-  
կերպութեան դէմ և որոշ չափով վարկաբեկել է այդ դատը՝ հայ  
հասարակութեան առաջ:

5) Կազմակերպելով «Զինւորական Խորհուրդ», այդ խումբը  
նպատակ է ունեցել յայտարարել զինւորական դիկտատուրա և  
բունի միջոցներով իր ձեռքն առնել կուսակցութեան վարչական  
գործը, գրամը, կայքը, Թիֆլիսի Խմբագրութիւնը և այլն:

6) Իւրացել է կազմակերպութեան մի քանի գէնքերը:

7) Գործիք է դարձել իշխանութեան ձեռքին և գտնուում է  
գաղտնի ոստիկանութեան յատուկ հովանաւորութեան ներքոյ:

8) Ապօրինի այդ մարմնի գործունէութիւնը անպայման ան-  
երկիմի կերպով պարսաւի է արժանացել Դաշնակցական բոլոր  
մարմինների և գործիչ ընկերների կողմից (Երկրէ, Կովկասի և  
արտասահմանի):

9) «Ժամանակաւոր զինւորական խորհուրդ» անւան տակ  
միացած ուժերի գործունէութիւնը ոչ միայն խուլիզանական շար-  
ժում է, ունենալով նեցուկ բուրժուական հակայեղափոխական մի  
խմբակ և ուսւ ոստիկանութիւնը, այլ և մի ստոր դաւաճանու-  
թիւն մասնաւորապէս տաճկահայ դատին, որի անունն է շահա-  
գործում:

Այս բոլոր փաստերի հիման վրայ՝ ժողովը վերաքննելով  
խնդիրը, որոշեց.

1) Համարել Միհրանի և «զինւորական խորհրդի» միւս  
գործակից անդամների վարմունքը ծանր յանցանք կազմակեր-  
պութեան և նրա պաշտպանած տաճկահայ դատի դէմ, և այդ հի-  
ման վրայ ճանաչել նրանց իսպառ արտաքսւած Դաշնակցութեան  
շարքերից:

2) Հրատարակել այդ որոշումը պաշտօնական օրգանի մէջ:

3)

4) Հրաւիրել Դաշնակցական իրաւասու մարմինների ուշա-  
դրութիւնն այն հանգամանքի վրայ, որ պապայում այդ տեսակ  
պէտք է անյապաղ ենթարկւեն «Կանոնագրով» նախ ու-  
լած պատասխանաւութեան, առանց սպասելու և բերել  
օրինակ խնդիրները Ընդհանուր ժողովին:

## Զ Ե Ղ Ծ Ա Ր Ա Ր Ն Ե Բ Ր

Լսելով Զրաբելով շրջանի մասին ներկայացւած գեկուցումը  
և գանելով որ այնտեղ տիրող տնտեսական տագնապը և զանա-  
գան հարստանարութիւնները են կառավարական ընդհա-  
նուր անարխիայի, գիւղացու սակաւահողութեան և աղքատու-  
թեան, ինչպէս և յեղափոխական նախկին մարտիկների կամ խմբե-  
րի մի մասի անբարյական սանձարձակութեան, Ընդհանուր  
ժողովը յայտարարում է.

1) Դաշնակցութիւնից հեռացում են ժողովրդի վրայ բռնա-  
ցող զինւորները, և նրանց դէմ կոիւ և յայտարարում կազմա-  
կերպական միջոցներով:

2) Աւարտուութիւնների, աւազակային խմբերի, ինչպէս և  
ոնարխիայի առաջն առնելու համար, պիտի կազմակերպել և ի-  
բար շաղկապել գիւղերը:

3) Կազմակերպել գիւղացիութիւնը, նպաստել նաև Ռուսաս-  
տանի յեղափոխական շարժումներին, որոնց յաղթանակը միայն  
կարող է լուծել հովային տագնապը՝ ապաւելով թէ տեղացուն և  
թէ գաղթականներին տնտեսական ծանր կացութիւնից:

## ԲԱՐՈՅՑԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ

Քրիստով Միթալէն և Յիշտակին

Հնդհանուր ժողովը հաճոյքով լսեց Կովկասեան բայօնական  
ժողովի որոշումը և Երևանի ընկերների առաջարկը՝ մեր անմո-  
ւանակի ընկեր Քրիստոափոր Միհրայէլիանի ընտանիքը ապահովե-  
լու մասին, ու աչքի տուած ունենալով, որ այդ հոգսը մինչև  
այժմ ծանրացած է եղել հանգուցեալի անձնական ընկերների  
վրայ, և որ այդ եղանակով գժւար է ապահով պայմանների մէջ  
զնել նրա զաւակի կրթութեան գործը, այլ և այն, որ կազմա-  
կերպութեան համար բարոյական պարտաւորութեան խնդիր է՝  
օգտագով այս ասիթից՝ արտայայտելու յարգանք մեր ընկերոջ  
թանկագին յիշտակին, որոշեց՝ կուսակցութեան վրայ առնել այդ  
գործի կարգաւորութիւնը ու պարտաւորեցնել Թիֆլիսի և Քաղաք  
մեր մարմիններին՝ անյապաղ գործի գլուխ անցնել և ամենաու-  
շը՝ մինչև 1907 թւի վերջը, կողմնակի միջոցներով, կազմել մի  
ֆոնդ և յատկացնել այդ՝ Քրիստոափորի ընտանիքի պահովու-  
թեան և նրա զաւակի ուսման գործին:

Յանձնարարել վ....ի և Տ....ի մարմիններին, ինչպէս և Ա-  
բեկեան Բիւրոյին, բարոյական աջակցութիւն ցոյց տալ մեր ան-

մոռանալի ընկերներ Ս-ի և Հ-ի ըստանիքներին՝ հոգալով կողմ-  
նակի կամ, եթէ այդ անհար լինի «Կարմիր Խաչի» միջոցներով,  
նրանց զաւակների ուսման գործը.

**Ն Ա Խ Հ Ա Շ Ի Ի**  
(1907)

- 1) Առձեռն դրամական միջոցները
- 2) Մարմինների սպասելիք եկամուտները
- 3) Բաշի ու մն

բաշխման մասը տպագրած է առանձին եւ ուղարկւած մար-  
միններին:

**Հ Ա Շ Ի Ա Կ Ա Ն Խ Ն Դ Ի Բ Ն Ե Բ**

- 1) Մարմինների հաշիվները
- 2) Դաշնակցութեան ընդհանուր հաշիվները
- 3) «Դրամ» կօմիտէի հաշիվները
- 4) Կազմումն հաշվական յանձնաժողովի, որի պարտաւո-  
րութիւնն է՝ ըննել, եթէ հարկ լինի նոյն իսկ պարունակութեանը ընհ-  
յուրութեանը կազմակերպութեան բարոր մաս մինների հաշիվները և ներ-  
կայացնել իր եղբակացութիւնը հսկող օրգանների:

**Է Ն Տ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ**

- 1) Արեւելիան բիւրո
- 2) Արեւմելիան բիւրո
- 3) Պատասխանական մարմիններ
- 4) Յուցա-եւրուսկան մարմին

**Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն Ե Բ**

**ՎՃԵՌՆԵՐ ԱՅԼԵՒԱՅԼ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ**

Այս վճռները կը հաղորդիմ եւկու Շիւրօների միջոցով, կտղ-  
մակերպական ձախադարձով:

2013



